Անհատական աշխատանքի ընթացքում ծնողները ներկայացրել են ընտանիքում առկա հոգեբանական, ֆինանսական խնդիրները:
Զրույցի ընթացքում ծնողներին ներկայացվել է կենտրոնում տրամադրվող ծառայությունները, ներկայացվել է կենտրոն հաճախման օրերը և գրաֆիկը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն կապված շահառուների՝

- վարքային դրսևորումների կարգավորմանը
- շփման ոլորտի կարգավորմանը
- կոնֆլիկտայնության նվազեցմանը
- ծնող-երեխա հարաբերությունների կարգավորմանը
- երեխայի մոտ խոհանոցից սնվելու սննդային սահմանափակումներին:

**<u>Երեխայի անհատական քարտի լրացում</u>**: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի հոգեբանը իրականցերլ է **4** երեխայի, որից 3 տղա 1աղջիկ անհատական հոգեբանական քարտի լրացում: Վեր է հանվել երեխաների իմացական և ճանաչողական ոլորտները: Բացահայտվել է երեխայի ուժեղ և թույլ կողմերը, վարքը, շփումը միջավայրում և մի շարք առանձնահատկություններ՝ հուզակամային ոլորտ, վարքային պատճառներ և հետևանքներ:

**<u>Հոգեբանական աշխատանքի թերթիկ</u>** լրացվել է **10** մայրերի հետ, որի նպատակն էր ծնողների հետ համատեղ պարզել երեխայի մոտ եղած հոգեբանական խնդիրները, ինչ ընթացքով աշխատանքը պետք է ընթանա» Թերթիկում նաև նշվում է հետագա արդյունքը:

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն</u>** իրականացվել է **49 երեխաների** հետ, որից **31** տղա, **18** աղջիկ:
Աշխատանքները ուղղված են եղել այն երեխաներին, ովքեր ունեն հուզական, հոգեխոսքային, նյարդային գերակտիվություն, վարքային դրսևորումներով են օժտված, որոնք չեն համապատասխանում տարիքային զարգացմանը:
Նպատակը հետեյալն էր անհատական աշխատանքի լիարժեք պայմաններ ստեղծել անձը զարգացնելու, թերապիաների միջոցով օգնել հասկանալ իրենց անհատական առանձնահատկությունները, խնդիրները, պատճառները, խանգարող հանգամանքները, սեռատարիքը, որը երեխան գտնվում է ճգնաժամային վիճակում, որի համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝ շտկողական, զարգացնող, ուսուցանող:

Հոգեբանը աշխատանք է իրակացրել երեխաների հետ որոնք ունեցել են հուզակամային ոլորտի խանգարում, վախեր, վարքային դրսևորումներ: Իրականացվել է արտ-թերապիա՝ երաժշտաթերապիա, ավազաթերապիա, հեքիաթերապիա: Այն ունեցել է իր արդյունավետությունը, բնականոն ընթացքը, դրական հանգուցալուծումներ: Հեքրաթների միջոցով ստեղծվել է խաղաղ մթնոլորտ:

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է **30 ընտանիքի** հետ, որից **29** մայր, **1** տատ:
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է ծնողների հետ, ովքեր անհանգստանում էին երեխաների նյարդային, ագրեսիվ, հուզական վիճակից:
Աշխատանքի ընթացքում տրվել է հոգեբանական աջակցություն, խորհրդատվություն և մեթոդներ: Ծնողներին ցուցվել է հոգեբանի հետ զուգահեռ ցուցաբերել հետևողականություն երեխաների նկատմամբ, հարգալից վերաբերմունք և սեր ու գուրգուրանք տալ երեխաներին: